Հենց որ Ստեփանակերտի շենքերի բակերում նոր փռած լվացք է հայտնվում, նշանակում է՝ ջուրը տվել են, ու տանտիկինները, գլուխները կորցրած՝ անցել են ջրային գործերին՝ ջանալով այդ երկու ժամում հասցնել առավելագույնը:

ՀԻ՞ԲՆ ՋԻՐԵՐԸ ՏԸԼԱՆ

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

Էլ պատահական չէ, որ Ստեփանակերտում լվացքն ընդունված է փռել առավոտյան ժամերին կամ ուշ երեկոյան. ջրերը քաղաքում տալիս են առավոտյան ժամը 7-9-ը կամ երեկոյան 19-21-ը: Ղարաբաղցի տանտիրուհու համար այս չափազանց կարեւոր ու նվիրական գործընթացը, բացի մեծ ջանքերից, նաեւ հոսող ջուր է պահանջում, ինչի մշտական առկայությունը, սակայն, Ստեփանակերտում շարունակում է մնալ որպես կանացի երազանքներից մեկը: Ստեփանակերտցի Կատյա Դադայանը չի հավատում, որ կգա մի օր, երբ ինքը ցանկացած պահի իր տան ջրի ծորակից ջուր կլցնի, դեն կնետի խոհանոցում ու բաղնիքում շարված բազմաթիվ պլաստմասսայե շշերը, ցանկացած պահի կկարողանա միացնել լվացքի մեքենան եւ ստիպված չի լինի, աշխատանքը դեռ չվերջացրած՝ տուն վազել, որ հասցնի լողանալ ու ջուր հավաքել:



Լեռնային համարվող այս տարածաշրջանի աբսուրդներից մեկն էլ այն է, որ ամեն եղանակ իրեն բնորոշ ջրային պրոբլեմներն է ստեղծում. ցուրտ ձմռանը սառչում են ջրախողովակները, ամռան շոգին էլ չորանում ու անհետանում է ջուրը, ինչի արդյունքում մարդիկ ստիպված են լինում տաքսիներով ջուր կրել այս կամ այն աղբյուրից կամ, լավագույն դեպքում՝ դույլով հյուր գնալ հարեւանին՝ հուսալով դատարկաձեռն չվերադառնալ: Մի խոսքով՝ ամառ թե ձմեռ ջրի պրոբլեմը կա: Այս ամենի պատճառը, թերեւս, ջրախողովակների քարուքանդ վիճակն է. դեռեւս խորհրդային տարիներից ժառանգված այդ խողովակների մի մասը պատերազմի ժամանակ է փչացել, մյուս մասն էլ պարզապես հնացել ու ժանգոտվել է: Քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում ապրող Կարինե Գրիգորյանը, որի բնակարանը 4-րդ հարկում է գտնվում, ասում է, որ ջուրն իր թուլությունն է: «Միշտ ջրի պակաս ունենք: Կամ մինչեւ մեր հարկը չի բարձրանում, կամ չանն է (ջրի բաք) սառչում: Ես դեռ չեմ հիշում մի ժամանակահատված, երբ ջուրը բոլ-բոլ օգտագործեմ»,- վրդովվում է տանտիկինը: Եւգենյա տատիկն էլ ջրային իր պրոբլեմներն անեկդոտների է վերածել. «Երեսիս ջրովը հատակն եմ լվանում, հատակի ջրովը բոստանս եմ ջրում, մինչեւ բոստան ջրելն էլ կոշիկներն եմ լվանում, քիչ է մնում մեխանիկորեն էդ կոշիկի ջրով էլ ճաշ եփեմ»:

Վերջին ցրտաշունչ ձմռան անջուր շաբաթներից հետո Ստեփանակերտի քաղաքապետը հայտարարեց, որ ջրամատակարարման հատուկ ծրագիր կմշակվի՝ քաղաքի ջրատար խողովակները վերանորոգելու եւ քաղաքում շուրջօրյա ջուր մատակարարելու նպատակով: Հայտարարվեց մրցույթ, որին արձագանքեցին հայաստանյան 4 կազմակերպություններ՝ ներկայացնելով առաջարկությունների 3 փաթեթ, որոնք ուսումնասիրվեցին ԼՂՀ կառավարության համապատասխան կառույցների կողմից: Երեկ հանձնախմբի եզրակացությունները հրապարակեցին ԼՂՀ քաղաքաշինության փոխնախարար Անահիտ Վարդանյանը եւ Ստեփանակերտի քաղաքապետ Վազգեն Միքայելյանը՝ ասելով, որ 4 կազմակերպություններից առաջին տեղում է Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի եւ «Հայջրնախագիծ» ինստիտուտի համատեղ ներկայացրած փաթեթը: Բայց ավելի շատ մանրամասնություններ այդպես էլ չհրապարակեցին: «Նախատեսվում է 18 ամսվա ընթացքում ավարտին հասցնել նախագծանախահաշվային փաստաթղթերը, որից հետո նախընտրած կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր: Ծրագիրը կֆինանսավորվի եւ պետական, եւ մասնավոր միջոցներով»,- ասել է քաղաքապետ Վ. Միքայելյանը՝ հույս ներշնչելով, ջրի կարոտ ստեփանակերտցիներին: Սակայն այդպես էլ պարզ չդարձավ, թե, ի վերջո, Ստեփանակերտում երբ կվերանա «դույլ ու ջրի շշեր» հասկացությունը: Թեեւ ակնհայտ է, որ անհնար է մի քանի ամիսների կամ մեկ տարվա ընթացքում քաղաքում տեղադրել նոր ջրախողովակներ: Այսինքն՝ դեռ մի քանի ամառ ու մի քանի ձմեռ ստեփանակերտցիները ստիպված կլինեն իրենց օրվա զգալի մասն անցկացնել աղբյուրների մոտ գոյացած հերթերում: